Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
անհատ խորհրդատուի ընտրություն

10 հունվարի, 2023թ.

Վարկի համարը՝ IBRD 85720 «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքի զարգացման ծրագիր» (ՏՏԵԶԾ)
Առաջադրանքի անվանումը՝ Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի խորհրդատու թարգմանիչ՝ անհատ խորհրդատու
Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ **LIC-16**
Վերջնաժամկետ՝ 2023թ. հունվարի 24-ը

Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ֆինանսավորում է ստացել «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի» (ՏՏԵԶԾ) իրականացման համար: Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի նպատակն է բարելավել զբոսաշրջային հատվածի ենթակառուցվածքները, ծառայությունները և ինստիտուցիոնալ կարողությունները և ավելացնել ոլորտի տեղական տնտեսության եկամուտները: Ակնկալվում է, որ Ծրագրի իրականացումից կշահեն Հայաստանի տարբեր մարզերի տեղական բնակչությանը, զբոսաշրջիկները և ձեռնարկությունները: Ակնկալվում է նաև, որ վերանորոգված մշակութային ժառանգության վայրերում և քաղաքներում հանրային ենթակառուցվածքները կդառնան ավելի մատչելի և որակյալ, կավելանան փոքր և միջին ձեռնարկությունների թիվը: Կառավարությունը կշահի զբոսաշրջության ընդհանուր ծախսերի ավելացումից, աշխատատեղերի ստեղծման, գործակալությունների ինստիտուցիոնալ կարողությունների բարելավումից և ակտիվների շահագործման և պահպանման կարողությունների բարելավումից: ՏՏԵԶԾ-ի բաղադրիչներից մեկը վերաբերում է մասնավոր ներդրումների ներգրավման համար հանրային ենթակառուցվածքների ապահովմանը:

Ծրագի հետագա արդյունավետ շարունակման համար նախատեսվում է վարձել Խորհրդատու **Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի խորհրդատու թարգմանիչ՝** աշխատանքների կատարման համար՝ հետևյալ գործառույթները իրականացնելու նպատակով.

Անհատ խորհրդատուի աշխատանքային պարտականությունները ներառում են, բայց չեն սահմանափակվում.

1. Իրականացնել տարբեր բնույթի /հիմնականում տեխնիկական/ ՏՏԵԶ ծրագրին առնչվող տեքստերի թարգմանություններ՝ հայերեն և անգլերեն լեզուներով,
2. Գրությունների, հաշվետվությունների, փաստաթղթերի անգլերեն/հայերեն թարգմանություն,
3. ՏՏԵԶ ծրագրին վերաբերող այցերի պաշտոնական հանդիպումների թարգմանությունների ապահովում,
4. Մասնակցություն դաշտային այցելություններին ՏՏԵԶ ծրագրին վերաբերող այցերին ներկա պատվիրակությունների հետ,
5. Աջակցություն ՏՏԵԶ ծրագրին առնչվող Ծրագրի համակարգողներին,
6. ՏՏԵԶ ծրագրին վերաբերող այլ առաջադրանքների իրականացում:

Կնքվելիք ծառայությունների մատուցման պայմանագրի գործունեության ժամկետը կսահմանվի մինչև **2024թ-ի դեկտեմբերի 31-ը:**

Խորհրդատուների ընտրության չափանիշներն են՝

- Լեզվաբանական ոլորտի բարձրագույն կրթություն,
- Առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ անգլերեն լեզվի թարգմանչական/լեզվաբանական ոլորտում,

- Առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ անգլերեն լեզվի թարգմանչական/լեզվաբանական ոլորտում, դոնորների կամ միջազգային ֆինանսական հաստատությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերում,
- MS Office ծրագրերի գերազանց տիրապետում:

Հետաքրքրված խորհրդատուն պետք է ներկայացնի տվյալներ իր կրթության և աշխատանքային փորձի վերաբերյալ (CV), որակավորումը հիմնավորող փաստաթղթեր և անհրաժեշտության դեպքում Պատվիրատուի կողմից պահանջվող այլ տեղեկատվություն: Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Համաշխարհային Բանկի ուղեցույցի "Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, հունվար 2011, փոփոխված 2014թ" սահմանված «Անհատ Խորհրդատուի ընտրության» ընթացակարգի համաձայն:
Լրացուցիչ տեղեկություններ հնարավոր է ստանալ ստորև բերված հասցեում, ՀՏԶՀ-ի գրասենյակից, աշխատանքային օրերին, ժամը 09:00-ից մինչև 18:00-ը:
Փաստաթղթեր պետք է ներկայացվեն էլ-փոստով՝ procurement@atdf.am և atdf@atdf.am հասցեներով, ոչ ուշ քան **2023թ. հունվարի 24-ը, ժամը 17:00**:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ,
ՀՀ, ք.Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31, ՀՏԶՀ գրասենյակ,
Գնումների բաժին
Հեռախոսը՝ (374 60) 50-15-60: